

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

IX – դասարան

1.«Հայաստանի վերքի երգիչ լուսապայծառ Աբովյան» - ը հայ նոր գրականության հիմնադիրն է, մեծ մանկավարժ ու դեմոկրատ: Նա առաջինն էր, որ հայ մանուկների հետ խոսեց սիրո ու հպարտության լեզվով, արժևորեց մեր մշակույթը՝ այն դիտելով եվրոպական մշակույթի մի մաս: 1840-ին 30-ամյա հայրենասերը գրեց իր լավագույն երկը, որը դարձավ հայ նոր գրականության հիմնաքարը:

«Վերք Հայաստանի» վեպը գրված է երախտապարտ զավակի սիրով, այն զավակի, որ ողբում է իր հայրենիքի ստրկական վիճակը, իր փառահեղ լեզվի օտարումը: Վեպն ունի «Հառաջաբան», որտեղ մեծ մտածողը բացահայտում է այնպիսի ճշմարտություններ, որոնք մղել են իրեն գրելու այդ սքանչելիքը: Ռուս գրող Ժուկովսկուն և գերմանացի բարեկամ Բոդենշտեյին գրած նամակներում նա գրում է վեպի գրության հանգամանքների և ժանրի ընտրության վերաբերյալ իր խոհերի մասին:

Վեպի «Հառաջաբանը» հայ նոր գրականության զարգացման ծրագիրն է: Աբովյանը առաջադրում է գրական նոր ուղղության սկզբունքները.

ա) լեզվի հարցը. պետք է գրել ժողովրդին հասկանալի լեզվով: Նա կենդանի խոսակցական լեզուն դարձնում է գրականության լեզու՝ հաստատելով աշխարհաբարի իրավունքը: Լեզուն ամեն ինչի սկիզբն է, այստեղից պետք է սկել լուսավորության ու գրականության նորոգության խնդիրը:

բ) երկրորդ խնդիրը վերաբերում է գրականության բովանդակությանը. անհրաժեշտ է գրել սիրո, կյանքի, հայրենասիրության թեմաներով: Նա նկարագրել է բոլոր այն գործողությունները, որոնք կազմում են մարդու հոգևոր և աշխարհիկ կյանքի բովանդակությունը:

գ) երրորդ կարևոր հարցը հերոսի ընտրության հարցն է. նա հերոս է ընտրում հասարակ ժողովրդի զավակ Ադասուն՝ ի տարբերություն կլասիցիզ մի պատմական հերոսների: Ոչ միայն գլխավոր հերոսն է ժողովրդի ծոցից ելած, այլև բազմաթիվ տիպեր ու կերպարներ նույնպես ներկայացնում են ժողովրդի տարբեր խավեր:

Ասույթի հեղինակը Նալբանդյանն է: «Այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը: Այստեղ՝ որպես մի կախարդական հայելու մեջ, ցույց է տալիս բանաստեղծը հայոց ազգի ընտանեկան կյանքի անշուք և անմխիթար պատկերները»:

2. ՀՀ Առաջին և Երրորդ հանրապետությունների օրհներգ է դարձել ազատության երգիչ Միքայել Նալբանդյանի « Իտալացի աղջկա երգը» փոխադրություն – բանաստեղծությունը:

Այդ բանաստեղծության մեջ նկարագրվում է իտալացի աղջկա հայրենասեր, ազատատենչ ոգին, ով արտասովորով դրոշ է գործում՝ եղբորը կոչվ ճանապարհելու: Աղջիկը եղբորը մաղթում է հաղթանակով պսակել հայրենիքի ազատության կոչվր: Նալբանդյանը գտնում է , որ չի պարտվի այն հայրենիքը, որ նման կանայք ունի և հիշում է V- դարի պատմիչ Եղիշեին, որը նկարագրել է իշխանագուն փափկասուն տիկնանց սխրանքը Ավարայրում: Նա ցավով է նշում , որ հայ իրականության մեջ դա վաղուց անհնարին թվացող սխրանք է.

Սորա կեսը, կեսի կեսը
Գեթ երևեր մեր ազգում.
Բայց մեր կանայք ...Ո՛ւր Եղիշե,
Ո՛ւր մեր տիկնայք փափկասուն:

Իսկ Եղիշեն մեզ պատգամել է՝

«Մահ ոչ իմացեալ մահ է, Մահ իմացեալ՝ անմահություն»:
«Ով իր նկատմամբ չար է, չի կարող ուրիշի նկատմամբ բարի լինել»:
«Անիրավությունից արդարություն չի լինի, ստից էլ՝ ճշմարտություն»:
«Վախը թերահավատության նշան է »:

3. Հայրենները ստեղծվել են միջնադարում: Դրանք սիրո, պանդխտության և խոհական թեմաներով քառասող ոտանավորներ են՝ 15 վանկանի տողերով՝ 7/8 բաժանումով: Հայրեն նշանակում է հայրենի կարգ, հայերեն: Հայրենի կարգը մեր գրականության մեջ առաջինը օգտագործել է Գրիգոր Նարեկացին, այնուհետև այդ կարգով ստեղծագործել են Ներսես Շնորհալին, Ֆրիկը, Հովհաննես և Կոնստանտին Երզնկացիները և այլք: Հայրենը ժողովրդագուսանական բանաստեղծության ամենատարածված ու ամենաբնորոշ տեսակն է: Հայրենները ստեղծվել են հիմնականում արևմտահայ քաղաքային միջավայրում(Ակն, Վան, Խարբերդ): Միջնադարյան 500 հայրեն, ստեղծված 13-14-րդ դարերից ի վեր, հասել են մեզ, որոնց մեծ մասը վերագրվում է XVI – դարի մեծ սիրերգակ Նահապետ Քուչակին: Քուչակի մասին մեզ շատ քիչ տեղեկություններ են հասել. Հայտնի է, որ նա ծնվել և ապրել է Վանի Խառակոնիս գյուղում, ապրել է 100 տարի: Նրան վերագրվող հայրենները միջնադարյան հայ գրականության գոհարներից են, սիրերգության անմրցելի հրաշքներից:

4. Միջնադարի վերջին հանճար Սայաթ – Նովան, մինչ արքունիքից վտարվելը և բռնությամբ քահանա ձեռնադրվելը, ապրել և ստեղծագործել է արվեստների քաղաք հին Թիֆլիսում:

Նա եղել է վրաց արքայազն Հերակլ II – ի պալատական երգիչը: Իր արթնամիտ արդարամտության համար նրան երկու անգամ արտաքսել են արքունի-

քից: Կյանքի վերջին տարիները նա եղել է Հաղպատի վանքի լուսարարը, մերթ էլ գնացել է Թիֆլիսի Սուրբ Գևորգ եկեղեցի:

1795-ին պարսից Աղա Մահմադ խանը արշավում է Թիֆլիսի վրա, և Սայաթ-Նովան շտապում է պաշտպանելու իր հայրենի քաղաքը: Այդ արշավանքի ժամանակ էլ նա սպանվում է 1795-ի սեպտեմբերին: Նրա աճյունն ամփոփվում է Հավլաբարի Սուրբ Գևորգ եկեղեցու բակում: Մոտ երկու հարյուր տարի նրա գերեզմանը մնում է մոռացված և միայն 1914-ին, հանճարեղ Լոռեցու և նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի ջանքերով, նրա գերեզ-

մանին մահարձան է կանգնեցվում: Թումանյանը այդ օրը կարդում է Սայաթ-Նովային նվիրված իր բանաստեղծությունը: 1914-ի մայիսից ցայսօր Սայաթ-նովյան Վարդատուն է նշվում նրա գերեզմանի մոտ:

Սայաթ-Նովան արքունիքում սիրահարվում է արքայադուստր Աննա Բատոնաշվիլուն, որն էլ նրա արտաքսման պատճառն է դառնում:

Մեծ սիրերգակի սիրային տաղերը նվիրված են իր « գուլում յարին », ով «այրելով այրեց» մեծ սիրահարին:

Այդպիսի հայտնի երգ-բանաստեղծություն է «Աշխարումըս ախ չիմ քաշի» տաղը : Բանաստեղծությունը գրվել է 1754-ին, երբ երկար բաժանումից հետո կրկին տեսնում է սիրած էակին:

Նա իր սիրած կնոջը համեմատում է անմահական ջրով լիքը ոսկե սկիհի հետ, զարբաբ(ոսկեկար) վրանի հետ, որի ստվերում նստում է ինքը: Նա խնդրում է գոգալին, որ իր մեղքն իմանա , հետո սպանի: Նա աշխարհում ախ չի քաշի, քանի սիրած կինը կա իր համար. Նա սիրուհու գովերգին միահյուսել է իր տառապանքը, իր անհուն սերը, իր նվիրումը:

Դրա համար էլ Թումանյանը նրան համարում է « մի հոյակապ սիրահար, որ էրվում, վերջանում է, բայց մնում է անչար ու անաչառ, վեհ ու վսեմ...»:

Այս տաղի մեջ ուրվագծվում է մեծ սիրահարի սիրո զգացումին զուգակցվող մահվան գաղափարը.

Քու Էշխըն ինձի մաստ արավ,
Յիս զարթուն իմ, սիրտս է քընած
Աշխարս աշխարով կըշտացավ,
Իմ սիրտըս քիզնից սով մընաց: